

Հայերի Ուսումնասիրության Կենտրոն

Անհերքելի է Հայերի հսկայական ներդրումը լեհական կուլտուրաի մեջ: Բնակվելով, XIII դարից սկսած, սահմանամերձ գոտում, նրանք ձուլվել են լեհ հասարակության հետ որպես հարուստ վաճառականներ, արհեստավորներ եւ ազնվականներ, միշտ լինելով հավատարիմ Լեհաստանին: Նրանց այսօրվա սերունդը հպարտ է կարողանալով ցույց տալ, որ նրանց արյունն է հոսել նկարիչ Թեոդոր Ակսենտովիչի, Շոպենի աշակերտ Կարոլ Միկուլի, Ջրիգնիեվ Հերբերտի մոտ, պատմաբան Սադիկ Բարոնչի, նավթով վառվող լամպի գյուտարար Իգնացի Լուկաշիեվիչի եւ նույնիսկ Յուլիուշ Սլովացկու երակների մեջ: Հայկական ծագում ունեն այնպիսի անձնավորություններ, ինչպիսիք են՝ Աննա Դիման, Քշիշտով (Քրիստոփոր) Պենդերեցկին եւ Ռոբերտ Մակլովիչը, հանրահայտ կուլինար հեռուստատեսային ծրագրի հեղինակ: Այժմյան հայկական ներգաղթը, 1990 թվականից ի վեր, չի սահմանափակվում միայն շուկայական առեւտրով: Չնայած աղմինիստրատիվ բարդություններին, լեհական բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդում են մի քանի Հայ գիտնականներ, ստեղծագործում են չորս արվեստագետներ, գործում են մի քանի ռեստորաններ: Աշխատում են նաեւ մի քանի բժիշկներ: Կարելի է ակնկալել, որ մի ազգ, որն ունի 1700 տարվա քրիստոնեական ավանդույթ, որի 2/3 մասը սփռված է աշխարհով մեկ, իր պոտենցյալով կհարստացնի նույնպես Լեհաստանը: Հետեւաբար հարկավոր է ստեղծել համապատասխան պայմաններ: Այս նախագծի հեղինակը սոցյուլոգ է, որը զբաղվում է հայկական հարցերով (պրոբլեմներով) 15 տարիներ շարունակ: Առաջին լեհական հայոց միգրացիաի ուսումնասիրման ղեկավար, մոտ 10 հրատարակչությունների հեղինակ (որից մի քանիսը արտերկրում, անգլերենով եւ հայերենով), մի քանի կոնֆերանսների մասնակից, որոնցից երկուսը Հայաստանում, որի ժամանակ ներկայացնում էր իր ուսումնասիրության արդյունքները: Նա չունի հայկական ծագում...

ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Կենտրոնը, որը կգործի Նիկողայոս Կոպեռնիկոսի անվան համալսարանի կառուցվածքում, կզբաղվեր հայագիտության բազմակողմանի պրոբլեմների լուծման ուղղությամբ: Կենտրոնի երկարաժամկետ գործունեությունը կֆինանսավորվեր անհատ սպոնսորների կողմից, արտասահմանյան հայկական ֆոնդերից, տեսականորեն Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Կույալսկո-Պոմորսկի մարզպետի կողմից: ՀՈՒԿ-ը կլինի Հումանիտական Ֆակուլտետի կառուցվածքում: Կենտրոնի անունը համապատասխանում է Ամերիկայում կամ Ռուսաստանում գործող նույնանման կենտրոնների անվանը, որը անշուշտ կհեշտացնի կապերը եւ գործունեության միջոցների ձեռքբերումը:

1. Գիտական նպատակը

Հայագիտությունը Լեհաստանում ներկայացված է մի քանի ուսումնասիրողների կողմից, մեծամասամբ պատմաբանների եւ արվեստաբանների կողմից: Կենտրոնի ստեղծումը կդառնար գիտական որոնումների իմպուլս նաեւ ուրիշ ասպարեզներում, օրինակ՝ սոցիոլոգիայում, ազգախոսության, քաղաքագիտության, կովկասագիտության, լեզվաբանության, կրոնագիտության, արեւելագիտության եւ Թուրքագիտության մեջ: Հայ գիտնականներն ունեն նաեւ մեծ նվաճումներ այլ բնագավառներում՝ բիոքիմիայի ինչպես նաեւ գենետիկայի

(HIV վիրուսի սիճուկի հայտնաբերումը կամ ասիական տենդի ուսումնասիրումը, որը կարող է հետաքրքրել Նիկողայոս Կոպեռնիկոսի անվան համալսարանի բժշկական ամբիոնի գիտնականներին): Հայկական համայնքները գոյություն ունեն Եվրոպայի շատ երկրներում եւ Մերձավոր Արեւելքում: Հայագիտությունը դա ո՛չ միայն գիտական բնագավառի կոնտակտներ են Հայաստանի հետ: Շատ գիտական օջախներ ամբողջ աշխարհում անցկացնում են գիտական ուսումնասիրություններ այդ ուղղությամբ եւ լեհական գիտական աշխարհի համար այդ Կենտրոնը կլինեք պրոֆեսյոնալ կապերի հաստատման միջնորդ:

2. Դիդակտիկ-կրթական նպատակները

Կենտրոնը կանցկացնեք հայերեն լեզվի կուրս, նախատեսված այն ուսանողների կամար, որոնք ցանկություն ունեն սովորելու: Հետագայում կարելի կլինեք ստեղծել առանձնահատուկ, ինտեգրալ կուլտուրայի եւ լեզվի կուրս: Դրա օրինակն է Նիկողայոս Կոպեռնիկոսի անվան համալսարանում արդեն գոյություն ունեցող ճապոներենի եւ արբաներեն լեզվի կուրսը: Դա կհարստացնեք մեր ուսումնական հաստատության դիդակտիկ առաջարկը: Կենտրոնը կկազմակերպեք լեզվի եւ կուլտուրայի վերաբերյալ դասնթացներ հայ ներգաղթյալների երեխաների համար – միչեւ այժմ այսպիսի կիրակնօրյա դպրոց ստեղծելու մի փորձ արվել է Վարշավայում: Այդ երեխաները մասնակիորեն դուրս են մնում կրթական սիստեմից, իսկ եթե նույնիսկ ներառված են կրթական սիստեմում, հեռու են մնում սեփական ազգային կուլտուրայից: Հաճախ չկարգավորված ապրելու իրավական դրությունը ծնում է հայեցի չդաստիարակվելու վտանգ որը կերեւա Հայաստան գնալու անհրաժեշտության դեպքում (վիզայի ժամկետի լրացում կամ վտարում):

3. (ապլիկացիյնի) նպատակները

Կենտրոնը նույնպես կարող է դառնալ տնտեսական եւ կուլտուրական շփման բազա Հայերի եւ Լեհերի միջեւ: Տնտեսական եւ տուրիստական հարաբերությունները խզվեցին 90-ական թվականներին, Ղարաբաղյան ազատագրական պատերազմի պատճառով: Լեհական կապիտալը անհամարձակ եւ դանդաղ է թափանցում Կովկաս, որը հսկայական շուկա է լեհական ապրանքների իրացման համար: Այդ հնարավորությունից օգտվում են ամերիկյան, ֆրանսյական եւ իհարկե ռուսական ֆիրմաները: Հայերը այնուհանդերձ հիշում են լեհական ապրանքները եւ նրանց մեծամասնությունը ունի սենտիմենտ մեր երկրի հանդեպ, որտեղ աշխատել են կամ դեռ աշխատում են նրանց ընտանիքի անդամներից որեւէ մեկը: Գոյություն չունի ո՛չ մի կազմակերպված տուրիստական շարժում, որը հանդիսանում է արգելք լեհ ճանապարհորդների եւ անհատ ուսումնասիրողների համար:

Տնվաշ Մարչինյակ

<http://www.centrum-armenia.uni.torun.pl/>